Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ

2012 Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 12-ԻՆ ՀՀ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Վանաձոր
2012

Բաց Հասարակության Հիմնադրամներ - Հայաստան

Դիտորդական առաքելության իրականացումը և սույն տպագրությունը հնարավոր դարձավ Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանի աջակցությամբ:

Սույն հաշվետվության մեջ արտահայտված տեսակետները, մեկնաբանություններն ու եզրակացությունները հեղինակներինն են և հնարավոր է, որ չհամապատասխանեն ֆինանսավորող կազմակերպությունների տեսակետներին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1 ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 4
2 ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ 5
Տեղամասային ընտրական հանձնաժողով (այսուհետ ՏԸՀ) 5
Վստահված անձանց առկայությունը ընտրատեղամասերում 6
3 ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՈՒՄ 8
Քվեարկության ընթացքի նկարագրությունը, ներառյալ միջադեպեր և խախտումներ ըստ ընտրատեղամասերի. 11
Տեղական ընտրական հանձնաժողովի վարքագիծը նշված խախտումների վերացման գործում 17
4 ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ 19
Արդյունքների ամփոփման ընթացքի նկարագրությունը, ներառյալ միջադեպեր և խախտումներ ըստ ընտրատեղամասերի. 19
5 Ընտրողների թիվը 22
6 Ընտրողների թիվն ըստ ընտրատեղամասերի և ժամերի 23
7 Ընտրողների թվի աճն ու նվազումը ըստ ընտրատարածքների և ժամերի 25
8 Մտահոգություններ առաջացած դիտորդական առաքելության արդյունքում և դրանց շտկմանն ուղղված առաջարկություններ 27

1 ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակը 2012 թվականի փետրվարի 12-ին դիտորդական առաքելություն է իրականացրել ՀՀ Արագածոտնի մարզի Սարալանջ համայնքի թիվ 14/01, Կոտայքի մարզի Հրազդան համայնքի թիվ 25/01, 25/04, 25/06, 25/07, 25/10, 25/15, 25/16, 25/17, 25/22, 25/25 և Շիրակի մարզի Պեմզաշեն համայնքի թիվ 36/01 և 36/02 ընտրատեղամասերում, որոնք տեղակայված էին.

Տեղամաս	Տեղամասային կենտրոնը
14/01	Սարալանջի հիմնական դպրոց
25/01	Թիվ 4 հիմնական դպրոց, ք. Հրազդան, Հարավային թաղամաս, Շահումյան փ. 170
25/04	Թիվ 1 ավագ դպրոց, ք. Հրազդան, Հարավային թաղամաս, Սպանդարյան փ. 19
25/06	Թիվ 8 հիմնական դպրոց, Կենտրոնական թաղամաս 54
25/07	Թիվ 15 նախադպրոցական ուսումնական հաստատություն, ք. Հրազդան, Կենտրոն թաղամաս 52
25/10	Թիվ 13 ավագ դպրոց, ք. Հրազդան, Կենտրոն թաղամաս 53
25/15	Թիվ 8 նախադպրոցական ուսումնական հաստատություն, ք. Հրազդան, Միկրոշրջան թաղամաս 80
25/16	Թիվ 5 հիմնական դպրոց, ք. Հրազդան, Ջրառատ թաղամաս 5
25/17	Թիվ 9 հիմնական դպրոց, ք. Հրազդան, Միկրոշրջան թաղամաս
25/22	Թիվ 11 հիմնական դպրոց, ք. Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, 14-րդ փ., 14
25/25	«ԵՄՈՒԿ» մարզադպրոց, ք. Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, 13-րդ փ., 16/1
36/01	Պեմզաշենի միջնակարգ դպրոց
36/02	«Հայփոստի» Պեմզաշենի փոստային բաժանմունքի շենք

Դիտորդները ընտրատեղամասեր են ժամանել առավոտյան ժամը 7:00-ին և այնտեղ գտնվել մինչև քվեարկության արդյունքների հաշվարկի ավարտը՝ արձանագրելով հետևյալը.

2 ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Տեղամասային ընտրական հանձնաժողով (այսուհետ ՏԸՀ)

<u>ՏԸՀ նիստ</u>

ՀՀ ընտրական օրենսգրքի 62 հոդվածի 1-ին կետի համաձայն. «Քվեարկության օրը՝ ժամը 7.00-ին, տեղամասային ընտրական հանձնաժողովը տեղամասային կենտրոնում կայացած նիստում վիճակահանությամբ որոշում է…»:

Սարալանջ համայնքի թիվ 14/01 ընտրատեղամասում տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամներն ընտրատեղամաս են ժամանել 07:35-ին:

Հրազդան համայնքի թիվ 25/01 ընտրատեղամասում 07:00-ի դրությամբ արդեն իսկ ավարտվել էր ՏԸՀ նիստը:

Նույն համայնքի 25/10 ընտրատեղամասում ՏԸՀ նիստը սկսվել է 10 րոպե ուշացումով:

<u>Հանձնաժողովի կնիքը</u>

Դիտարկված 13 ընտրատեղամասերից միայն 5-ի դեպքում է միանշանակ նշվել, որ ստուգվել է և ներկաները հավաստիացել են, որ հանձնաժողովի կնիքը օգտագործված չի եղել:

25/10 ընտրատեղամասում կնիքի չորությունը ստուգելու հնարավորությունը չի ընձեռվել այն պահանջող վստահված անձի կողմից, քանի որ նախագահը, կնիքը հանելով պահարանից, այն անմիջապես թանաքոտել է:

Մյուս տեղամասերում կնիքի օգտագործված լինելը կամ չլինելը հնարավոր չի եղել ստուգել:

<u>Քվեաթերթիկների ստորագրված լինելը</u>

ՀՀ ընտրական օրենսգրքի 59 հոդվածի 7-րդ կետի համաձայն. «Քվեարկության նախորդ օրը տեղամասային ընտրական հանձնաժողովն իր նիստում վիճակահանությամբ որոշում է քվեաթերթիկներն ստորագրող հանձնաժողովի երեք անդամի, որոնք պարտավոր են այդ օրը՝ մինչև ժամը 24.00-ն, ստորագրել կամ սեփական դրոշմով դրոշմել կամ անհատական կնիքով կնքել բոլոր քվեաթերթիկները…»:

Դիտարկված բոլոր ընտրատեղամասերում բոլոր քվեաթերթիկները ստորագրված են եղել հանձնաժողովի բոլոր 3 անդամների կողմից:

Վստահված անձանց առկայությունը ընտրատեղամասերում

Տեղամաս	Թեկնածուի անուն, ազգանունը	Վստահված անձի անուն, ազգանունը
14/01		Չկա
25/01	Արամ Դանիելյան Սասուն Միքայելյան	Ռաֆայել Օհանյանը, Դավիթ Շահնազարյանը
25/04	Արամ Դանիելյան Սասուն Միքայելյան	Ռուդիկ Ստեփանյան Զոյա Թադևոսյան
25/06	Սասուն Միքայելյան	Դավիթ Մաթևոսյան
25/07	Սասուն Միքայելյան	Սոս Գիմիշյան
25/10	Յուրաքանչյուր թեկնածու ուներ մեկական վստահված անձ	
25/15	Արամ Դանիելյան Սասուն Միքայելյան	Դանիելյան Մակիչ, Դանիելյան Աշոտ Կարապետյան Վլադիմիր, Բունարյան Յուրիկ
25/16	Դանիելյան Արամ Սասուն Միքայելյան	Փիլիփոսյան Արամայիս Միքայելյան Ավետիս /14:45/ Համբարձումյան Նվեր /14:15 – 19:00/ Փիլիփոսյան Սմբատ /19:00/ Փաշինյան Նիկոլ
25/17	Արամ Դանիելյան Սասուն Միքայելյան	Ալբերտ Եղիազարյան, Անիկ Գրիգորյան Լևոն Զուրաբյան
25/22	Արամ Դանիելյան Սասուն Միքայելյան	Վարդան Ղազարյան Բագրատ Անդրեասյան
25/25	Արամ Դանիելյան Սասուն Միքայելյան	Սամվել Տիգրանյան Վարդան Գրիգորյան
36/01	Անանիկ Ոսկանյան Երվանդ Միքաելյան	Մուրադյան Կամո Առաքելյան Պետրոս Գևոնգյան Ռոստոմ Թովմասյան Պետրոս Վարդանյան Աղասի Ոսկանյան Ժակ Վարդանյան Սուրիկ Եղոյան Արամ, Էլոյան Գարիկ
36/02	Երվանդ Միքայելյան Պետրոսյան Ալբերտ Ոսկանյան Անանիկ	Եղոյան Արփակ, Միքայելյան Վիտյա Հայրապետյան Արտակ Ոսկանյան Արամ

Թիվ 25/01, 25/06, 25/07, 25/16, 25/25 և 36/01 ընտրատեղամասերում գրանցվել են դեպքեր, երբ միևնույն ընտրատարածքում գտնվել են նույն թեկնածուի մեկից ավելի վստահված անձինք: Այսպես, 25/01 ընտրատեղամասում ՀՔԱ Վանաձորի գրասենյակի դիտորդը, հայտնաբերելով, որ Ա. Դանելյանի վստահված անձից բացի տեղամասում ներկա էր նաև չգրանցված երկրորդ վստահված անձ, այդ մասին տեղեկացրել է հանձնաժողովի նախագահին և Ս. Միքայելյանի վստահված անձին: Շուրջ 30 րոպե տևած «պարզաբանումներից» հնարավոր է եղել դուրս հրավիրել նշված անձին:

Թիվ 25/17 ընտրատեղամասում 2 դեպքում Արամ Դանիելյանի վստահված անձիք միաժամանակ ներկա են գտնվել ընտրատեղամասում, սակայն ՀՔԱ Վանաձորի գրասենյակի դիտորդի կողմից հանձնաժողովի նախագահին տեղեկացնելուց հետո նախագահը դուրս է հրավիրել տվյալ պահին չգրանցված վստահված անձին:

Թիվ 25/06 ընտրատեղամասում միայն դիտորդների ահազանգի հիման վրա հանձնաժողովի նախագահը պահանջել է ընտրատեղամասից հեռանալ Արամ Դանիելյանի երկրորդ վստահված անձին: Ի դեպ, հանձնաժողովի նախագահը կարգավորել է, որպեսզի Ա. Դանիելյանի վստահված երկու անձիք միաժամանակ չգտնվեն ընտրատեղամասում և փոխարինեն մեկը մյուսին:

3 ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՈՒՄ

Դիտորդական առաքելության իրականացման ընթացքում նույն անձի կողմից բազմակի քվեարկության դեպքեր չեն արձանագրվել դիտարկված 13 ընտրատեղամասերից և ոչ մեկում:

Երբեմն արձանագրվել են դեպքեր (թիվ 14/01, 25/01 և 36/01 ընտրատեղամասերում), որ քվեաթերթիկը քաղաքացիների կողմից լրացվել են քվեախցիկից դուրս:

Գրանցվել են առանձին դեպքեր, երբ անձը քվեարկության մասին հայտնել է հանձնաժողովի անդամներին կամ որևէ թեկնածուի վստահված անձին, մասնավորապես թիվ 25/01 ընտրատեղամասում ընտրողը ուղղակի ճանապարհին նշում է կատարել քվեաթերթիկում, Ա. Դանիելյանի վստահված անձին ցույց տալով դրել ծրարի մեջ և գցել արկղը, մյուս թեկնածուի վստահված անձի ներկայությամբ: Սակայն նա ոչինչ չի ձեռնարկել, իսկ հանձնաժողովի նախագահին դիտորդների ներկայացված դիտարկումները մնացել են անհետևանք և անպատասխան: Թիվ 25/07 ընտրատեղամասում դիտորդը գրանցել է դեպքեր, երբ որոշակի նշանների (ժեստիկուլյացիայի) միջոցով ընտրողները հաղորդակցվել են հանձնաժողովի անդամների և վստահված անձանց հետ: Նույն ընտրատեղամասում իրենց ընտրության մասին բարձրաձայնել են 2-3 տարեցներ: Թիվ 25/15 ընտրատեղամասում մի քանի դեպք է եղել, երբ ինչ-որ մեկը խմած եկել է իր թեկնածուի օգտին բարձրաձայն խոսելով, առաջացել է քաշքշուկ, որին միջամտել է ոստիկանությունը: Որոշ քաղաքացիներ ուղղակի ցանկացել են բաց քվեարկել, ասելով, որ թաքցնելու ոչինչ չունեն, սակայն դա չի թույլատրվել: Թիվ 36/01 ընտրատեղամասում եղել են մարդիկ, որ ցանկացել են առանց քվեախցիկին մոտենալու քվեարկել, բայց հանձնաժողովի նախագահը կամ վստահված անձիք ուղորդել են քվեախցիկում քվեարկելու:

Թիվ 14/01, 25/01, 25/06, 25/07, 25/15, 25/16, 05/07 և 36/01 ընտրատեղամասերում գրանցվել են դեպքեր, երբ քվեարկության սենյակում ներկա է եղել այդտեղ գտնվելու իրավունք չունեցող անձ:

Դիտարկման արդյունքում գրանցվել է, որ ՏՐՀ անդամների՝ 2 ժամը մեկ պարբերականությամբ գործառությունների հերթափոխ ընդհանրապես չի իրականացվել թիվ 14/01 տեղամասում, իսկ 36/01, 36/02 և 25/01 ընտրատեղամասերում այն իրականացվել է մասնակի: Օրինակ թիվ 36/01 ընտրատեղամասում ժամը 10:00-ից ոչ մեկը իր տեղը չի փոխել մինչև 13:32, որից հետո հանձնաժողովի 2 անդամները փոխվել են տեղերով՝ հանձնաժողովի նախագահի ցուցումով:

Դիտորդների կողմից ընտրողների նկատմամբ ճնշումների կամ սպառնալիքների դեպքեր չեն արձանագրվել: Սակայն թիվ 14/01 ընտրատեղամասում գտնվող ՀՔԱ Վանաձորի գրասենյակի դիտորդը արձանագրել է հարկադրանք՝ կապված ընտրություններին

ներկայանալու հետ, քանի որ միակ թեկնածուն գործող գյուղապետն էր ու հանձնաժողովում փորձում էին զանգերով մարդկանց ներկայություն ապահովել, որ, ինչպես իրենք էին նշում, «ամոթով չմնան»: Թիվ 25/01 ընտրատեղամասում ներկա դիտորդն էլ նկատել է քաղաքացիների մի խումբ, որոնք շատ զգուշորեն էին քվեարկում՝ «Կարծես վախեցած», իսկ ընտրությունների ամփոփման ընթացքում բացվում էին քվեաթերթիկներ, որոնք մի քանի անգամ ծալված էին և տպավորությունը այնպիսին էր, որ քաղաքացիները ցանկացել են «գեր գաղտի» պահել իրենց ընտրությունը: Նման քվեաթերթիկներ նկատվում էր թեկնածու Սասուն Միքայելյանին ձայն տրված քվեաթերթիկներում:

Թիվ 25/01 ընտրատեղամասում գտնվող ՀՔԱ Վանաձորի գրասենյակի դիտորդը

արձանագրել է, որ նկատվում էին երկու ՈՒԱԶ մակնիշի մեքենաներ, որոնք անընդհատ մարդկանց էին բերում տեղամաս և հետ տանում, որոնցից մեկի համարանիշը ֆիքսված է լուսանկարով: Բայց դժվար է նշել, թե այդ մեքենաները, որ թեկնածու օգտին էին աշխատում: Ավտոմեքենաները հիմնականում աշխատել են ժամը 11:30-ից մինչև 17:00-ի սահմաններում, որոնց հետևանքով տեղամասում մարդկանց մեծ հոսք և կուտակումներ կային:

25/06 ընտրատեղամասում ժամը 10:50 րոպեին 17 853 պետհամարանիշներով սպիտակ գույնի ՈՒԱԶ մակնիշի մեքենայով ընտրատեղամաս են բերվել վեց ընտրողներ: Քաղաքացիներին ընտրատեղամաս բերելու համար հիմնականում օգտագործվում են մարդատար ավտոմեքենաներ: Քվեարկությունից հետո, ընտրատեղամասից դուրս գալիս ընտրողները փնտրում էին իրենց բերած ավտոմեքենային տուն վերադառնալու համար, բայց որոշ դեպքերում, դրանք արդեն չեն եղել: Ժամը 19:00-ին մոտ երկու հոգու ուղեկցությամբ ընտրական տեղամաս է բերվել հաշմանդամ /մեկ ոտքը ծնկից կտրված / մյուս ոտքը վիրակապված ընտրող:

Թիվ 25/22 և 25/04 տեղամասերում ներկա դիտորդներն արձանագրել են, որ երկու թեկնածուների կողմից էլ մարդատար մեքենաներով ընտրատեղամասեր են բերվել ընտրողներ:

Թիվ 36/01 ընտրատեղամաս մեքենաներով տեղափոխվել են Ոսկանյան Անանիկի օգտին քվեարկող անձիք:

Ընտրատեղամասային կենտրոններին մինչև 50 մետր շառավղով հարող տարածքում մարդկանց կուտակումներ են առաջացել թիվ 25/01, 25/16, 25/17, 25/22, 25/04, 36/01 և 36/02 ընտրատեղամասերում:

Տեղամաս	
25/01	Հիմնականում 12:00-ից մինչև 16:30-ի սահմաններում
25/04	Հիմնականում ժամը 12:00 –ից մինչև 16:30
25/06	Մարդկանց կուտակումներ տեղամասից դուրս չի նկատվել: Քվեարկության սենյակին հարակից տարածքում մեծ կուտակումներ են առաջացել ժամը 12:00-ից մինչև ժամը 16:30 սահմաններում: Ոստիկանության շնորհիվ կարգավորվել է ընտրողների մուտքը քվեարկության սենյակ՝ պահպանելով կարգ ու կանոնը, թույլ չի տրվել կուտակումներ քվեարկության սենյակում: Միաժամանակ հանձնաժողովի մեկ անդամի համար շատ դժվար է եղել սպասարկել մինչև 1000 հոգանոց ընտրողների գրանցամատյանը /բնակության հասցեի, անձի ինքնության, անձնագրի համարի գրանցում, ընտրողից ստորագրության ստացում/, որի պատճառով նույնպես մեծացել է կուտակումները: Ընտրողները դժգոհել են, սակայն հանձնաժողովի նախագահի կողմից բազմիցս բացատրվել է կուտակումների պատճառները, և հորդորել է պահպանել բնականոն աշխատանքային մթնոլորտ, որպեսզի հանձնաժողովը արագ աշխատի, հակառակ դեպքում, աղմուկի, կարգի խանգարման պայմաններում ավելի կդժվարանա հանձնաժողովի աշխատանքը:
25/16	11:30-ից հետո մինչև 19:50
25/17	Քանի որ ընտրատեղամասը գտնվում էր փողոցի վրա, ուստի նոր եկող ընտրողները կանգնած էին տեղամասի բակում:
25/22	Առավոտից մինչև երեկո: Դպրոցի դիմացի փողոցում երկու թեկնածուների կողմից էլ մարդիկ կային, որոնք զգուշացվում և հեռացվում էին հանձնաժողովի նախագահի և ոստիկանության աշխատակիցների կողմից: Փողոցի մյուս մասում կար գրասենյակ, որի պատից փակցված էր Արամ Դանիելյանի A4 ֆորմատի պաստառը և գրասենյակի ներսում մարդիկ նստած էին մինչև ուշ երեկո:
36/01	Առավոտյան
36/02	11:00-14:00, 16:00-20:00

Քվեախցիկի, քվեատուփի և քվեաթերթիկների հատկացման սեղանների դասավորվածությունը եղել է իրականացված օրենքով սահմանված կարգով[1]:

[1] ՀՀ ընտրական օրենսգրքի 55 և 56 հոդվածներ

Հատկանշական է, որ բավական մեծ թիվ է կազմել ինքնուրույն քվեարկելու կարողություն չունեցող ընտրողների թիվը: Դիտորդների կողմից արձանագրվել է, որ քվեարկելու համար օգնությունը ցուցաբերվել է տարբեր անծանոթ անձանց կողմից և չի արձանագրվել որևէ դեպք, որ նույն անձն օգնի մի քանի անձանց քվեարկել: Հիմնականում քվեարկելուն աջակցել են այն անձիք, ում ուղեկցությամբ եկել են ինքնուրույն քվեարկել չկարողացող անձիք:



Քվեարկության ընթացքի նկարագրությունը, ներառյալ միջադեպեր և խախտումներ ըստ ընտրատեղամասերի.

<u>Թիվ 14/01 ընտրատեղամաս</u>

1. Հանձնաժողովի նախագահը և չորս անդամներ ընտրատեղամաս եկան 7:35-ին, քարտուղարը եկավ 7:56-ին, իսկ մյուս անդամը (Ալվարդ Վարդանյան) եկավ 10:05-ին:
2. Քվեասենյակ մտավ Ապարանի ոստիկանապետը ոստիկանների ուղեկցությամբ, բայց անմիջապես տեղեկացրեցին, որ ներս գալու իրավունք չունի և դուրս հրավիրեցին:
3. Շատ էին դեպքերը, երբ քաղաքացիները քվեաթերթիկը նախապես ծրարի մեջ չէին դնում, այլ դա անում էին քվեատուփին հասնելու ճանապարհին, իսկ ընտրատեղամասից դուրս գալիս հաջողություն էին մաղթում գյուղապետին՝ ակնհայտ ցույց տալով, թե ինչպես են քվեարկել:
4. Գյուղապետը և մի քանի այլ քվեարկողներ քվեարկելուց հետո մնում էին ներսում զրուցելու, բայց հանձնաժողովը նրանց անմիջապես դուրս էր հրավիրում:
5. Գյուղապետը մի քանի անգամ ներս մտավ ընտրատեղամաս՝ հիմնականում հարցնում էր, թե հանձնաժողովն ինչի կարիք ունի, հրահանգում էր ուտելիք բերել:
6. Բազմաթիվ դեպքեր կային, երբ քաղաքացիները մտնում էին մի քանի անձնագրով, բայց հանձնաժողովը չէր թույլատրում քվեարկել: Ընտրողներն ակնհայտ զարմանում էին դրանից:
7. Մի աղջիկ եկավ անձնագրի պատճենով քվեարկելու: Տարածքային հանձնաժողովի ներկայացուցիչն ասեց «Եթե մենակ ապարանցիներով լինեինք, պրոբլեմ չկար, բայց

դիտորդներ ունենք, դրա համար չես կարող ընտրել»: Դուրս գալիս աղջիկը խնդրեց «Ռուբիկ ձյաձյային» (գյողապետին) տեղեկացնել, որ ինքն եկել էր քվեարկելու:

8. Արագածոտնի մարզպետարանի ներկայացուցիչը կնոջ հետ ներս մտավ ու շտապեցրեց, որ անմիջապես քվեաթերթիկ տան, որպեսզի ինքը քվեարկի, այդ ընթացքում հանձնաժողովի մի մասը ճաշում էր, դրա համար դանդաղ էին գտնում անունը: Քվեաթերթիկը ստանալուց հետո ընտրողը քվեարկեց հենց գրանցման սեղանի վրա: Բոլոր հորդորներին և նկատողություններին, որ նա դրա իրավունքը չունի, նա պատասխանեց, որ իրեն ամեն ինչ կարելի է:
9. Շատ էին դեպքերը, երբ փորձում էին ընտանիքով քվեարկել, բայց տեղեկացվում էին, որ իրավունք չունեն:
10. Արձակուրդ եկած մի զինվոր ակնհայտորեն քվեարկեց ուրիշի փոխարեն, քանի որ իր անունը չկար ընտրողների ցուցակներում:
11. Ընտրատեղամասը շատ ցուրտ էր, բողոքներին պատասխանում էին, որ հնարավորություն չունեն ավելի լավ ջեռուցելու, դպրոցի ջեռուցման վճարը ուսուցիչների աշխատավարձից էին տալիս:

<u>Թիվ 25/01 ընտրատեղամաս</u>

1. Ընտրասենյակում չէր պահպանվում կարգուկանոն, մասնավորապես մշտապես ներկա էին գտնվում մարդիկ, որոնք այնտեղ լինելու իրավունք չունեին:
2. Ընտրասենյակում ընտրողների թիվը ժամը 12:00-ից մինչև 16:30-ի կողմերը հասնում էր մինչև 35-40 մարդու: Իսկ դիտորդների միջամտությունները այդ խնդիրը լուծելու համար մնում էին անարդյունք, իսկ հանձնաժողովի նախագահն ինձ պատասխանեց. «Ուր ուզում ես, որտեղ ուզում ես և ինչ ուզում ես գրի, էդ մանր-մունր բաների հետևից ուր եք ընկնում»: Սակայն հանձնաժողովի նախագահը զբաղված էր միայն քվեարկության ծրար կնիքելով:

3. Ընտրատեղամասում հանձնաժողովի անդամների մեջ հերթափոխ չէր կատարվում: Ի պատասխան իմ դիտարկումների հանձնաժողովի նախագահը պատասխանում էր «Հազիվ սովորել են և ծանոթացել ցուցակներին ինչի փոխվեն նորից նոր խնդիրներ ունենանք»:
4. Քվեարկության ընթացքում գրանցվեց մեկ դեպք, երբ ընտրողը տեղամաս էր ներկայացել անձնագրային բաժանմունքից տրված թիվ 9 Ձև տեղեկանքով, որի վրա կնիքը կիսատ էր և կարծես թե նկարը փակցված էր կնիքի վրա: Ս. Միքայելյանի վստահված անձը պահանջում էր, որ քաղաքացուն թույլատրեն ընտրել: Սակայն այս պահանջը ևս անպատասխան մնաց, իսկ հանձնաժողովի նախագահը պնդում էր, որ

ինքը ճանաչում է այդ կնոջը և որ նա իր բարեկամն է: Փաստորեն վերջում այդ քաղաքացին կատարեց ընտրությունը:

5. Հանձնաժողովի նախագահը երկու անգամ ընդհարվեց լրագրողների հետ և քաշքշեցին միմյանց, 1-ին դեպքում հանձնաժողովի նախագահի վրդովմունքը կապված էր լրագրողի կողմից իրենց տեղամասի վերաբերյալ հոդված գրելու հետ, իսկ մյուսը՝ ինքնուրույն ընտրել չկարեցող քաղաքացուն օգնություն ցույց տալու:

<u>Թիվ 25/04 ընտրատեղամաս</u>

1. Հանձնաժողովը ծանոթ չէր իր լիազորությունների և պարտականությունների շրջանակին, ինչպես նաև ընտրական օրենսգրքին, որի պատճառով թույլ էր տալիս կազմակերպչական բնույթի սխալներ, ինչը բարդացնում էր աշխատանքը:
2. Քաղաքացիներին պատշաճ ձևով չէր բացատրվում ընտրելու կարգը և չէր տեղեկացվում այն մասին, որ նրանք իրավունք ունեն որևէ մեկին խնդրել իրեն օգնել, եթե դրա կարիքը կա, ուստի օգնության կարիք ունեցող քաղաքացիները իրենց հարազատների հետ մտնում էին քվեախցիկ, որի պատճառով դիտորդների և վստահված անձանց կողմից մեծ աղմուկ էր բարձրացվում:

<u>Թիվ 25/06 ընտրատեղամաս</u>

1. Դանիելյանի վստահված անձը ակնհայտորեն, կոպտորեն փորձեց խոչընդոտել լրագրողի աշխատանքը, որն իրականացնում էր քվեարկության պրոցեսի տեսագրություն՝ այդ թվում նաև այդ վստահված անձը հայտնվում էր տեսանյութում: Դիտորդների, Ս. Միքայելյանի վստահված անձի միջամտության, հանձնաժողովի նախագահի ակտիվ գործողության արդյունքում, կանխվեց լրագրողի նկատմամբ ոտնձգությունը, լրագրողը շարունակեց իր աշխատանքը, իսկ Ա. Դանիելյանի վստահված անձը հեռացավ, նրան փոխարինեց մյուս վստահված անձը: Այդ միջադեպին ոստիկանների օգնության կարիքը չկար:
2. Քվեարկության ընթացքում ահազանգված և վերացված խախտումները չեն արձանագրվել հանձնաժողովի կողմից: Պատշաճ արձանագրվել են միայն քվեարկության օգնության կարիք ունեցողներին օգնած ընտրողների տվյալները:
3. Մեկ անգամ հանձնաժողովի քարտուղարը ուսումնասիրում էր գրանցամատյանը, սակայն Ս. Միքայելյանի վստահված անձը հանձնաժողովի նախագահից պահանջեց դադարեցնել նման ուսումնասիրությունը, քանի որ կասկածներ կարող են առաջանալ քվեարկության չեկած ընտրողների ցանկը ճշտելու և հաղորդելու կապակցությամբ: Հանձնաժողովի քարտուղարը դադարեցրեց իր գործողությունը, և այլևս նման գործողություն չի կրկնվել:
4. Քվեարկության եկած կարճաժամկետ զինծառայողին, ով գտնվում էր արձակուրդում, չթույլատրվեց մասնակցել քվեարկությանը, հանձնաժողովի քարտուղարը գտնում էր,

որ դրա իրավունքն ունի զինվորը, միայն օրենքի համապատասխան հոդվածը մատնանշելուց հետո հանձնաժողովի քարտուղարն այլևս չխոչընդոտեց զինվորի քվեարկության մասնակցելուն:

5. Քվեարկության սենյակը բավական տաքացված չէր:

<u>Թիվ 25/07 ընտրատեղամաս</u>

1. Ժամը 11:30-ից հետո քվեարկողների հոսքը ակտիվացել է, հատկապես 12:00-14:00-ն, հանձնաժողովի նախագահը դուռը ժամանակ առ ժամանակ փակում էր, ներողություն խնդրում քաղաքացիներից, հետևում, որ տեղամասում կուտակումներ չլինեն:
2. Տեղամասը սաստիկ ցուրտ էր, ինչը խոչընդոտում էր լիարժեք աշխատանքը, հանձնաժողովի որոշ անդամներ, վստահված անձիք երբեմն ստիպված էին լինում գնալ ոստիկանների սենյակում տեղադրված վառարանի մոտ տաքանալու:
3. Մի տատիկ ընտրելուց հետո մոտեցավ ցուցակներից մեկին ու հարցրեց «փող չկա»:
4. Ընտրողների մեջ կային մտավոր հետամնացությամբ անձիք, նրանցից մեկի մայրը նշեց, որ իր տղան չի կարող ինքնուրույն ընտրել, որովհետև չգիտի էլ՝ ում է ընտրելու:
5. Բոլոր դիտորդները, լրագրողները Սասուն Միքայելյանի կողմնակիցներն էին:

<u>Թիվ 25/10 ընտրատեղամաս</u>

1. Գրանցվեց մեկ դեպք, երբ քաղաքացին եկավ քվեարկելու և պարզվեց, որ նրա անվան դիմաց արդեն քվեարկել են և կատարվել էր համապատասխան նշում: Հանձնաժողովի կողմից տեղամաս կրկին անգամ հրավիրվեց այն անձը, ով քվեարկել էր վերոհիշյալ անձի փոխարեն (և՛ հանձնաժողովի անդամները, և՛ վստահված անձիք դեմքից հիշում էին քվեարկողին) և նրա անձնագրային տվյալները ստուգելուց հետո պարզվեց, որ շփոթմունք է եղել: Նոր եկած քաղաքացուն հնարավորություն ընձեռվեց քվեարկել, իսկ մատյանում կազմվեց համապատասխան արձանագրություն:

<u>Թիվ 25/15 ընտրատեղամաս</u>

1. Ընտրողներից մեկը ընտրատեղամաս էր եկել խմած վիճակում և կոնֆլիկտ առաաջացավ:
2. Քվեարկության սենյակում հաճախ միաժամանակ գտնվում էին ավելի քան 15 ընտրողներ: Ժամեր շարունակ մարդիկ 30-40 հոգով հերթի էին կանգնած հենց քվեարկության սենյակում:
3. Հանձնաժողովի նախագահը որոշ ընտրողների հանդեպ կողմնապահ էր, եթե նամակը ծրարի մեջ չէր, նա առանց քվեարկության քվեախուց վերադառնալու դնում էր ծրարի մեջ, իսկ ոմանց նույնիսկ հրելով և վատ բառեր ասելով ստիպում էր վերադառնալ, դնել ծրարի մեջ, նոր մոտենալ քվեատուփին:

Թիվ 25/16 ընտրատեղամաս

1. Քվեարկության սենյակին հարող միջանցքում երբեմն գոյանում էին հերթեր:

Թիվ 25/17 ընտրատեղամաս

1. Ժամը 19:06-ի սահմանում 3 րոպեով անջատվել է տեղամասի լույսը, որը ըստ ներկաների՝ տեխնիկական պատճառներով է եղել, քանի որ միացնելով թեյնիկ՝ լույսերի համար նախատեսված ապահովիչը «գցել է»: «Այդ պահին գտնվել եմ քվեատուփի մոտ, այնտեղ են եղել նաև Հայկական կոմիտեի դիտորդը և լրագրողներ, արտառոց դեպքեր չեն գրանցվել նշված ժամանակահատվածում»:
2. Ընտրության ողջ ընթացքում ոստիկանները պահպանել են կարգ ու կանոն, որևէ կռիվ, միջադեպ չի գրանցվել:
3. Կեսօրի ընթացքում մեծ էր ընտրողների թիվը, որի պատճառով հանձնաժողովի նախագահը, ինքնուրույն չկարողանալով զսպել մարդկանց հոսքը դեպի ընտատարածք, հրավիրեց ոստիկաններին և վերջիններս կարգավորեցին այն: Հիշեցնեմ, որ ընտրատեղամասը գտնվում էր փողոցի մոտ և ընտրողները հավաքվում էին տեղամասի բակում:

Թիվ 25/22 ընտրատեղամաս

1. Քվեարկության ընթացքում, երբ մեծանում էր մարդկանց հոսքը, ոստիկանները, պահպանելով կարգը, քաղաքացիներին ներս էին թողնում քիչ-քիչ և ըստ ցուցակների համարների:
2. 12:10-ի սահմաններում Մարգարյան Բենիկի փոխարեն փորձում էր ընտրել այլ քաղաքացի (մորեղբոր տղան), Արամ Դանիելյանի վստահված անձը՝ Վարդան Ղազարյանը, նկատելով այդ, դիմեց հանձնաժողովի նախագահին, որ ինքնությունը պարզեն: Նախագահը ստուգեց անձնագիրը և թույլ չտվեց ընտրելու /ստորագրել էր ցուցակում և քվեաթերթիկը վերցրել, սակայն չի քվեարկել/. Քաղաքացին, արագ վերցնելով անձնագիրը, հեռացավ ընտրատեղամասից, փաստի վերաբերյալ կազմվեց արձանագրություն գրանցամատյանում, տեղեկացվեց ոստիկանությանը, որը նույնպես արագ պարզեց քաղաքացու ինքնությունը: Դրանից հետո ընտրատեղամաս եկան նաև Կենտրոնական ընտրական հանձնաժողովից /3 հոգի/ զրուցեցին հանձնաժողովի նախագահի հետ, նայեցին ընդհանուր դրությունը և հեռացան:
3. Օրվա տարբեր ժամերին /3-անգամ/, տեղամաս է այցելել ոստիկանապետը երկու աշխատակիցների հետ, զրուցել տեղամասի ոստիկանների, այնուհետև հանձնաժողովի նախագահի հետ և հեռացել:

Թիվ 25/25 ընտրատեղամաս

1. Կնիքի օգտագործված լինելու վերաբերյալ հայտարարությունը Սասուն Միքայելյանի վստահված անձի՝ Վ. Գրիգորյանի պահանջով գրանցվել է հանձնաժողովի մատյանում, սակայն այդ ժամանակ քվեարկությունը արդեն սկսվել էր, այսինքն հնարավոր չէր հավաստիանալ կնիքի թաց կամ չոր լինելու փաստում:
2. Մեկ քվեարկող հայտարարեց, որ ըստ ընտրողների ցուցակի, իր բնակարանի հասցեում գրանցված է մի անձ, որը ըստ իրեն չպետք է գրացված լիներ այդտեղ: Սասուն Միքայելյանի վստահված անձը կազմեց արձանագրություն միջադեպի վերաբերյալ:

Թիվ 36/01 ընտրատեղամաս

1. Քվեարկության ընթացքում ընտրատարածքում գտնվել են ընտրատարածքում գտնվելու իրավունք չունեցող անձիք:
2. Հաշմանդամ 1 ընտրողի հարազատները վերջինիս հասցրել էին ընտրատարածքի մուտքի մոտ, երբ հանձնաժողովի նախագահը ընտրողին տեսնելով, ճշտեց անձնագրի տվյալները և քարտուղարին ուղարկեց քվեաթերթիկով, որպեսզի հաշմանդամ ընտրողը քվեարկի, 2-րդ դեպքում նախագահը ինքը մոտեցրեց քվեաթերթիկը հաշմանդամ ընտրողին:
3. Լինում էին դեպքեր, որ ընտրատարածքում լինում էին 15 ընտրողներից ավելի:
4. Ժամը 16:25-ի սահմաններում հանձնաժողովի քարտուղարը հանձնաժողովի անդամին ցուցում տվեց, որ արտագրի ցուցակներից քվեարկությանը չմասնակցած անձանց անունները, ինչը սակայն չիրականացվեց այն բանից հետո, երբ ՀՔԱ Վանաձորի գրասենյակի դիտորդն այդ մասին իր դիտարկումը հայտնեց հանձնաժողովի նախագահին:

Թիվ 36/02 ընտրատեղամաս

1. Եղել են բաց քվեարկության դեպքեր (քվեախցիկից դուրս), սակայն հանձնաժողովի անդամները հնարավորիս միջամտում էին՝ դիտողություն անելով:
2. Դրսում մեքենաների հոսքը չի դադարել, եղել են կուտակումներ:
3. Ներսում երբեմն հայտնվում էին անձիք, որոնք ոչ քվեարկող էին, ոչ դիտորդ, իրենց ասելով՝ վստահված անձիք, սակայն գրանցամատյանում չգրանցված:
4. Հանձնաժողովի անդամների գործառույթները ոչ միշտ էին փոխվում՝ ըստ կարգի, շատ դեպքում էլ ժամը մեկ էին փոխվում ցրտի պատճառով՝ էլեկտրական սալիկի մոտ տաքանալու համար:

Տեղական ընտրական հանձնաժողովի վարքագիծը նշված խախտումների վերացման գործում

Տեղամաս	
14/01	Հանձնաժողովն ակտիվորեն աշխատում էր խախտումները վերացնելու ուղղությամբ:
25/01	Որևէ բան չէր ձեռնարկվում, նույնիսկ մեր դիտորդների բողոքներից հետո, որոնք մնում էին անպատասխան:
25/04	Խախտումներ նկատելու դեպքում դիմել եմ հանձնաժողովի նախագահին, ով անմիջապես վերացրել է խախտումը: Օրինակ՝ ընտրողների մեծ հոսքի ժամանակ մարդիկ անվերահսկելի էին և մուտք էին գործում սենյակ հաշվի չառնելով հանձնաժողովի կողմից զգուշացումները: Երբ տեղամասում գտնվող անձանց թիվը գերազանցում էր 15-ը, ես այդ մասին իմ դիտարկումները հայտնում էի հանձնաժողովի նախագահին, ով դուրս էր հրավիրում ավել քաղաքացիներին: Միևնույն ժամանակ գրանցվել են դեպքեր, երբ առանց հանձնաժողովին զգուշացնելու և գրանցվելու երկու հոգով էին մի խցիկին մոտենում՝ ինքնուրույն քվեարկել չկարողացող անձին օգնելու նպատակով: Դիտորդների արձագանքի արդյունքում հանձնաժողովը գրանցում էր գրեթե բոլոր օգնողներին: 3 հոգի չցանկացան գրանցվել և լքեցին տեղամասը:
25/06	Հանձնաժողովի նախագահը ակտիվ էր, խախտումների վերացման առումով, միայն դիտորդների, Ս. Միքայելյանի վստահված անձի կողմից խախտումների ահազանգի դեպքում: Ա. Դանիելյանի վստահված անձի կողմից խախտումների վերաբերյալ ահազանգեր չէին ներկայացվում, քանի որ հանձնաժողովի թե՛ նախագահը, թե՛ քարտուղարը, թե՛ երեք այլ անդամներ հստակ կողմնորոշված էին Ա. Դանիելյանի օգտին: Մեկ անդամ՝ Ս. Միքայելյանի օգտին:
25/07	Հանձնաժողովի նախագահը և մյուս անդամները անմիջապես արձագանքում էին, անհրաժեշտության դեպքում ճշտում Ընտրական օրենսգրքով և վերացնում խախտումը:
25/15	Հանձնաժողովի նախագահը արձագանքում էր դրանց միայն երբ որևէ մեկը այդ հարցը բարձրացնում էր:
25/16	Երբեմն զարմանում էին և ասում, որ այդպես չի կարելի: Վստահված անձանցից մեկին՝ Ավետիս Միքայելյանին /Արամ Դանիելյանի վստահված անձ/ նախագահը մոտ 4-5 անգամ զգուշացրեց, որ դուրս գա սենյակից, քանի որ չէր գրանցվել /Սմբատ Փիլիփոսյանն արդեն այնտեղ էր/,

	սակայն նա շարունակում էր դռան մուտքի մոտ կանգնել և դիտել՝ միաժամանակ խոսելով մյուս վստահված անձանց հետ:
25/17	Հանձնաժողովն ակտիվորեն աշխատում էր խախտումները վերացնելու ուղղությամբ:
25/25	Հանձնաժողովի նախագահը և մյուս անդամները անմիջապես արձագանքում էին, անհրաժեշտության դեպքում ճշտում Ընտրական օրենսգրքով և վերացնում խախտումը:
36/01	Խախտումները վերացվել են, առանց արձանագրության կազմման
36/02	Փորձել են շտկել իրադրությունը՝ դիտողության ձևով

4 ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Բոլոր ընտրատեղամասերը փակվել են ժամը 20:00-ին և անմիջապես հաստատված կարգի համաձայն սկսվել է քվեների հաշվարկման գործընթացը: Քվեների հաշվարկման ընթացքում տեղամասում ներկա գտնվելու իրավունք չունեցող անձիք ներկա չեն եղել:
Լրացված քվեաթերթիկների անվավեր ճանաչելու գործընթացում անհետևողականություն չի արձանագրվել:

Արդյունքների ամփոփման ընթացքի նկարագրությունը, ներառյալ միջադեպեր և խախտումներ ըստ ընտրատեղամասերի.

<u>Թիվ 14/01 ընտրատեղամաս</u>

Միջադեպեր չկային, սակայն առաջացել էին որոշ խնդիրներ, մասնավորապես.

1. հանձնաժողովը չգիտեր, որ խոտան մեկ քվեաթերթիկը պետք է մարել չքվեարկված, չօգտագործած քվեաթերթիկների հետ:
2. արձանագրության մեջ տեխնիկական սխալներ եղան քարտուղարի չիմացության պատճառով:

<u>Թիվ 25/01 ընտրատեղամաս</u>

Քվեների հաշվարկման ընթացքն իրականացվել է օրենքով սահմանված կարգով, որևէ միջադեպ չի արձանագրվել, վստահված անձիք հատուկ կարծիք ունենալու կամ բողոք ունենալու վերաբերյալ նշում չեն կատարել: Միջադեպեր չեն արձանագրվել:

<u>Թիվ 25/04 ընտրատեղամաս</u>

20:06-ի սահմաններում հովհարային անջատման պատճառով խուճապ սկսվեց: Հովհարային անջատումը տևեց շուրջ 10 րոպե, որի ընթացքում որևէ խախտում չի արձանագրվել:
Հանձնաժողովը մոտ մեկ ու կես ժամը ծախսեց ելունդները և ցուցակները հաշվելու վրա և այդպես էլ չկարողացավ պարզել, թե ինչու էին ելունդները ավել ցուցակով ընտրողների թվից: Առաջին հաշվարկից հետո ելունդները ավել էին 11-ով, իսկ կրկնակի հաշվարկի արդյունքում դրանք ավել էին 7-ով:
Քվեաթերթիկները հաշվելուց հետո պարզվեց, որ քվեաթերթիկները թիվն էլ տարբեր էր քվեարկածների թվից:

<u>Թիվ 25/06 ընտրատեղամաս</u>

1. Քվեաթերթիկների հաշվարկի ընթացքում, որոշ տարաձայնություններ առաջացան որոշ թվով քվեաթերթիկների վավեր ճանաչելու հարցում, սակայն դրանք հարթվում էին

հանձնաժողովի նախագահի, անդամների, վստահված անձանց և դիտորդների բուռն քննարկման արդյունքում:

2. Լրագրողները հնարավորություն ունեին նկարահանելու արդյունքների հաշվարկի ամբողջ պրոցեսը:
3. Առաջացավ վիճաբանություն Դանիելյանի վստահված անձի և լրագրողի միջև՝ տեսագրության հետ կապված /վստահված անձը գտնում էր, որ լրագրողն իրավունք չունի տեսանյութում ընդգրկի իրեն/: Հանձնաժողովի նախագահը միջամտեց միջադեպին, հայտնելով Դանիելյանի վստահված անձին, որ լրագրողն իրավունք ունի տեսագրելու:



4. Հատկանշական է, որ անվավեր քարտերից մեկի վրա կար հետևյալ գրությունը. «Ում փոխ եք տվել, թող նա էլ ընտրի»:

<u>Թիվ 25/07 ընտրատեղամաս</u>

20:00-ին տեղամասը փակվեց, կապարակնքվեց քվեատուփը, նախագահը խնդրեց պահել բոլոր գիչները, բացի 1-ից, որն անհրաժեշտ էր քարտուղարի աշխատանքի համար: Պահվեց նաև անհատական կնիքները: Հաշվեցին չօգտագործված և մարված քվեաթերթիկները, ելունդները, տեղավորվեցին համապատասխան ծրարներում, որոնք ստորագրվեցին օրենքով սահմանված կարգով: Մինչ քվեատուփի բացելը բոլոր գործողությունները կատարվել են համաձայն ուղեցույցի, քարտուղարը բարձրաձայն կարդացել է և կատարվել է համապատասխան գործողությունը: Քվեատուփի բացելուց հետո նախագահը կապոցներով հանել է ծրարները, դրել սեղանին՝ իր առաջ, ու հերթով ծրարից հանելով թվեաթերթիկները՝ ասել թեկնածուի անուն ազգանունը, ում օգտին քվեարկվել է և փոխանցել այն անձին, ով հավաքել է տվյալ թեկնածուի օգտին քվեարկած քվեաթերթիկները: Բոլոր ծրարներից քվեաթերթիկները հանելուց հետո նորից ստուգվել են Արամ Դանիելյանի, Սասուն Միքայելյանի օգտին քվերակված և անվավեր քվեաթերթիկները, հաշվվել: Վերջում կազմվել է արձանագրություն, քաղվածքներ են տրամադրվել ցանկացողներին:

Հատկանշական է, որ անվավեր քվեաթերթիկներից մեկի վերջում քվեարկողը ձեռագիր ավելացրել էր Աբրահամ Լինկոլնի անունը և քվեարկել նրա օգտին:

<u>Թիվ 25/10 ընտրատեղամաս</u>

Քվեարկության ամփոփման գործընթացը ընթացել է առանց խախտումների, սակայն հանձնաժողովը իմացության պակասի պատճառով չգիտեր, թե ինչպես է պետք կազմել արդյունքների ամփոփման արձանագրությունը և միայն ՀՔԱ Վանաձորի գրասենյակի դիտորդի խորհրդատվությունից հետո, հնարավոր է դարձել արձանագրության կազմումը:

Թիվ 25/15 ընտրատեղամաս

Քվեաթերթիկների հաշվարկի ընթացքում միջադեպեր չեն գրանցվել: Օրենքով սահմանված կարգով հաշվել են քվեաթերթիկները, այնուհետ տեղադրել սահմանված տուփերի մեջ: Նախքան հաշվարկը սկսելը հաշվարկվել են չօգտագործված և անվավեր ճանաչված քվեաթերթիկները, ոչ մի առարկություն ներկաների կողմից չի եղել:

Թիվ 25/16 ընտրատեղամաս

Նախ փակեցին քվեատուփը, հետո սեղանները մոտեցրին իրար, նաև մոմ վառեցին, որ հանկարծ լույսերը չանջատեն, կնիքները հավաքեցին, դրեցին թղթե տոպրակի մեջ, հետո հաշվեցին չօգտագործված և մարված քվեաթերթիկները, ելունդները, գրիչները խնդրեցին պահել, հետո ցուցակներում ստորագրությունները, հետո ՝ քվեաթերթիկները մեկական հանելով /նախագահը/ դասավորեցին 3 խմբի ըստ թեկնածուների և անվավեր քվեաթերթիկների: Վերջում հաշվեցին բոլորը, տեղավորեցին պարկի մեջ:

Թիվ 25/17 ընտրատեղամաս

20:00-ին փակվեց տեղամասը, ներսում ընտրողներ չկային, կապարակնքվեց քվեատուփը, ստուգվեց ընտրատեղամասում ներկա գտնվողների ինքնությունը՝ պարզելու ընտրատեղամասում գտնվելու իրավունք չունեցող անձանց առկայությունը: Այդպիսիք չկային: Նախագահը հանձնաժողովի անդամներից վերցրեց անհատական կնիքները և դրեց պարկի մեջ, այնուհետև հաշվարկվեց չօգտագործված թերթիկները, որից հետո հաշվարկվեցին ցուցակները, լրացուցիչ ցուցակը, այնուհետև սկսվեց քվեաթերթիկների հաշվարկը, մեկ առ մեկ տուփից հանվեցին ծրարները, բացվեցին բոլորին ցույց տալուց հետո տրվեցին համապատասխան թեկնածուի քվեները հավաքող հանձնաժողովի անդամին: Ամփոփումն անցել է օրենքի պահանջներին համապատասխան:

Թիվ 25/22 ընտրատեղամաս

Արդյունքների ամփոփումը անցել է սահմանված կարգով առանց միջադեպերի:

Թիվ 25/25 ընտրատեղամաս

Քվեարկության ամփոփման գործընթացը ընթացել է առանց միջադեպերի և խախտումների: Հանձնաժողովի բոլոր որոշումները համաձայնեցվել են թե՛ հանձնաժողովի բոլոր անդամների, թե՛ կողմերի վստահված անձանց հետ:

Թիվ 36/1 ընտրատեղամաս

Արդյունքների ամփոփումը անցել է սահմանված կարգով առանց միջադեպերի:

Թիվ 36/2 ընտրատեղամաս

Արդյունքների ամփոփումը անցել է սահմանված կարգով առանց միջադեպերի:

5 Ընտրողների թիվը

Տեղամաս	Ընտրողների թիվը	Քվեարկության մասնակիցների թիվը	Տոկոս
14/01	182	115	63%
25/01	1786	1149	64%
25/06	1914	1033	54%
25/15	1813	1068	59 %
25/16	1890	1353	72%
25/17	1919	1111	58%
25/07	1719	949	55%
25/25	1869	1043	56%
25/10	1767	895	51%
25/22	1592	867	54%
25/04	1732	1014	59%
36/01	1258	883	70%
36/02	987	693	70%

6 Ընտրողների թիվն ըստ ընտրատեղամասերի և ժամերի

	9:00	10:00	11:00	12:00	13:00	14:00	15:00	16:00	17:00	18:00	19:00	20:00
Հրազդան 25/06	59	111	216	334	492	613	740	835	890	962	1012	1033
Հրազդան 25/10	38	85	190	322	350		644	700		860	870	894
Հրազդան 25/07	36	69	161	300	395		700	800	847	890	940	949
Հրազդան 25/22	22	80	176	217	386	565	654	710	773	810	860	868
Պեմզաշեն 36/01	15	50	116	212	343	500	621	750	805	854	874	880
Հրազդան 25/17	62	111	183	290	450	583	703	843	927	930	1060	1111
Պեմզաշեն 36/02	12	52	120	212	350	470	510	580	630	680	690	693
Հրազդան 25/25	31	95	201	310	450	614	751	845	905	960	1017	1043
Հրազդան 25/04	25	97	190	235	470	637	760			960	1000	1014
Հրազդան 25/01	28	65	119	250	450	603	773	913	1005	1058	1100	1149
Սարալանջ 14/01	4	5	14	28	53	66	71	90	103	111	114	115
Հրազդան 25/15	41	111	222	370	590	735	820	928	980	1017	1050	1068
Հրազդան 25/16	25	84	168	228	370	490	620	765	900	1025	1150	1354


1600
1400
1200
1000
800
600
400
200
0
8:00
9:00
10:00
11:00
12:00
13:00
14:00
15:00
16:00
17:00
18:00
19:00
20:00
Հրազդան 25/06
Հրազդան 25/10
Հրազդան 25/07
Հրազդան 25/22
Պեմզաշեն 36/01
Հրազդան 25/17
Պեմզաշեն 36/02
Հրազդան 25/25
Հրազդան 25/04
Հրազդան 25/01
Մարալանջ 14/01
Հրազդան 25/15
Հրազդան 25/16

7 Ընտրողների թվի աճն ու նվազումը ըստ ընտրատարածքների և ժամերի

	8-10	10-13	13-15	15-18	18-20
Հրազդան 25/06	111	381	359	603	430
Հրազդան 25/10	85	265	379	481	413
Հրազդան 25/07	69	326	374	516	433
Հրազդան 25/22	80	306	348	462	406
Պեմզաշեն 36/01	50	293	328	526	354
Հրազդան 25/17	111	339	364	566	545
Պեմզաշեն 36/02	52	298	212	468	225
Հրազդան 25/25	95	355	396	564	479
Հրազդան 25/04	97	373	387	573	441
Հրազդան 25/01	65	385	388	670	479
Սարալանջ 14/01	5	48	23	88	27
Հրազդան 25/15	111	479	341	676	392
Հրազդան 25/16	84	286	334	691	663


800
700
600
500
400
300
200
100
0
8-10
10-13
13-15
15-18
18-20
Հրազդան 25/06
Հրազդան 25/10
Հրազդան 25/07
Հրազդան 25/22
Պեմզաշեն 36/01
Հրազդան 25/17
Պեմզաշեն 36/02
Հրազդան 25/25
Հրազդան 25/04
Հրազդան 25/01
Սարալանջ 14/01
Հրազդան 25/15
Հրազդան 25/16

8 Մտահոգություններ առաջացած դիտորդական առաքելության արդյունքում և դրանց շտկմանն ուղղված առաջարկություններ

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը իրականացնելով դիտորդական առաքելություն ՀՀ Արագածոտնի, Կոտայքի և Շիրակի մարզերի ընդհանուր թվով 13 ընտրատողամասերում արձանագրել է մի շարք խնդիրներ: Մասնավորապես կապված.

- **Տեղական ընտարական հանձնաժողովների ձևավորման, գործունեության և իմացության աստիճանի հետ**

1. <u>**Իրադրության նկարագրություն**</u>

Դիտորդներն արձանագրել են, որ տեղական ընտրական հանձնաժողովի հատկապես նախագահն ու քարտուղարը ճանաչելով համայնքի բոլոր բնակիչներին նույնիսկ հայտարարել են, որ անգիր գիտեն, թե ով ում օգտին է քվեարկելու և եթե ցանկանա, ապա կարող է նույնիսկ անել այնպես, որ իր չուզած մարդու օգտին քվեարկող քաղաքացու քվեաթերթիկը անվավեր դառնա: Գրանցվել են նաև դեպքեր, երբ հանձնաժողովի քարտողարի պահանջով քարտուղարը ընտրողների ցուցակներից դուրս հանելով դեռևս չքվեարկածների անունները, անձամբ զանգահարել է վերջիններով՝ նրանց պարտավորեցնելով գնալ քվեարկության: Որոշ դեպքերում քվեարկության սենյակում կուտակումներ են առաջացել այն պատճառով, որ ընտրության եկած քաղաքացիները ճանաչելով հանձնաժողովի անդամներին զրույցի են բռնվել հանձնաժողովի այս կամ այն անդամի հետ: Դեռ ավելին, որևէ տրամաբանական բացատրություն չկա օրենդրի հետևյալ ձևակերպումներին. համաձայն ՀՀ ընտրական օրենսգրքի 37 հոդվածի համաձայն «4. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամն … չի կարող լինել որևէ կուսակցության անդամ…: 5. Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամն … չի կարող լինել որևէ կուսակցության անդամ…:», իսկ 42 հոդվածի «2. Տեղամասային ընտրական հանձնաժողովում անդամ նշանակում են՝ 1) Ազգային ժողովում խմբակցություն ունեցող կուսակցությունները, կուսակցությունների դաշինքները՝ մեկական անդամ, եթե խմբակցությունների թիվը մեծ է 4-ից, և երկուական անդամ, եթե խմբակցությունների թիվը փոքր է հինգից.»:

Նախ հասկանալի չէ, թե ինչու է օրենսդիրը նման տարբերակում դրել կենտրոնական, տարածքային և տեղամասային ընտրական հանձնաժողովների ձևավորման ընթացակարգում: Ենթադրվում է, որ կենտրոնական և տարածքային ընտրական հանձնաժողովների անդամների համար «չի կարող լինել որևէ կուսակցության անդամ» պահանջը նախատեսված է որպես անկողմնակալ լինելու նախապայման, սակայն անհասկանալի է, թե ինչու այդ նույն նախապայմանը չի տարածվում նաև տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամների վրա, ինչի արդյունքում վերջիններս բացահայտ կողմնակալ դիրք են ունենում քվեարկության ընթացքի անց կացման գործընթացում:

Իրադրության բարելավմանն ուղղված առաջարկություններ

1. Կատարել ՀՀ ընտրական օրենսգրքի փոփոխություն, համաձայն որի տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամները ևս չեն կարող լինել որևէ կուսակցության անդամ:
2. Տեղամասային ընտրական հանձնաժողովները ձևավորել գործուղված (տվյալ համայնքում չբնակվող) անդամներից, ինչը կնպաստի անաչառության և անկողմնակալության բարձրացմանը:

2. **Իրադրության նկարագրություն**

Որոշ ընտրատեղամասերում հանձնաժողովի անդամների գործառույթների հերթափոխն իրականացվել է երկու ժամը մեկ, ինչպես դա նախատեսված է ՀՀ ընտրական օրենսգրքի 62 հոդվածով. «1. Քվեարկության օրը՝ ժամը 7.00-ին, տեղամասային ընտրական հանձնաժողովը տեղամասային կենտրոնում կայացած նիստում վիճակահանությամբ որոշում է…. 5) տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների՝ 2 ժամը մեկ պարբերականությամբ գործառույթների հերթափոխը:» Սակայն հարկ է նկատել, որ օրենսդրությունն ունի անհստակություն: Մասնավորապես, ըստ օրենքի հանձնաժողովի անդամների գործառույթները պետք է բաշխվեն վիճակահանությամբ, և նրանց գործառույթները պետք է հերթափոխվեն: Առաջին վիճակահանությունից հետո՝ ժամը 08:00- 10:00 միջակայքի համար, հասկանալի չէ, թե հետագա երկժամյա տիրույթներում գործառույթների բաշխումը պետք է իրականացվի վերստին վիճակահանությամբ, թե պարզապես տեղերը փոխելու միջոցով: Յուրաքանչյուր երկժամյա տիրույթի համար վիճակահանության դեպքում հավանական է նույն անդամի կողմից միևնույն գործառույթի իրականացումն ամբողջ քվեարկության ընթացքում՝ այսինքն տեղի կունենա գործառույթների հերթափոխի սկզբունքի խախտում:

Իրադրության բարելավմանն ուղղված առաջարկություն

Կարելի է օրենսդրորեն հստակ սահմանել, որ առաջին վիճակահանությունից հետո, մնացած ժամանակահատվածների համար գործառույթները բաշխվում են տեղերը մեկ քայլով տեղափոխելու միջոցով:

3. **Իրադրության նկարագրություն**

Արձանագրված որոշ թերությունների պատճառները տեխնիկական էին, սակայն սակավաթիվ չեն եղել նաև այնպիսի դեպքեր, երբ խնդիրներ են առաջացել հանձնաժողովի անդամների ցածր տեղեկացվածության, ի պաշտոնե իրենց պարտականությունների չտիրապետման և ընտրական օրենսգրքի պահանջներին չտիրապետելու պատճառով: Այսպես օրինակ, որոշ ընտրատեղամասերում խնդիրներ են առաջացել այն բանից հետո, երբ քվեարկության եկած անձը տեսնելով, որ իր փոխարեն քվեարկել են, հանձնաժողովի

անդամները չեն իմացել ինչպես վարվել, որտեղ արձանագրել թերությունը և ինչ ընթացակարգով: Որոշ տեղամասերում (օրինակ 14/01, 25/04, 25/10, 36/01 ընտրատեղամասում) հանձնաժողովը լիարժեք չէր տիրապետում ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն ամփոփելու կարգին, մասնավորապես հանձնաժողովը հաշվարկի արդյունքում ստանալով ելունդների, քվեացուցակներում գրանցված անձանց և քվեաթերթիկների թվաքանակի տարբերություն, չեն իմացել ինչպես վարվել և ինչպես արձանագրել արդյունքները: Հանդիպել են դեպքեր, երբ արդյունքների ամփոփման արձանագրությունը կազմվել է դիտորդների աջակցությամբ և այլն:

<u>Իրադրության բարելավմանն ուղղված առաջարկություն</u>

Անհրաժեշտ է կազմակերպել հանձնաժողովի անդամների համար խորացված (ցանկալի է մեկամսյա) դասընթաց, որի արդյունքում վերջիններս կտիրապետեն ընտրական օրենսգրքին, ԿԸՀ որոշումներին և հնարավորություն կունենան խորացնել իրենց գիտելիքները տեղամասային ընտրական հանձնաժողովի լիազորությունների և պարտականությունների շրջանակի վերաբերյալ:

- **Դիտորդական առաքելության գրանցման և դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունների անաչառության հետ**

4. <u>Իրադրության նկարագրություն</u>

«Ընտրությունների անցկացման մասնագիտական դասընթացներ կազմակերպելու, անցկացնելու և որակավորում շնորհելու կարգը, դասընթացներին մասնակցելու դիմումի, ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման և դիտորդական առաքելություն իրականացնելու վկայականների ձևերը սահմանելու մասին» ՀՀ ԿԸՀ 2011 թվականի հուլիսի 29-ին ընդունված թիվ N 36-Ն որոշմամբ. «2. Դասընթացներ կարող են կազմակերպվել նաև Հայաստանի Հանրապետությունում գրանցված այն հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների համար (այսուհետ՝ դիտորդ), որոնք ցանկանում են դիտորդական առաքելություն իրականացնելու շրջանակներում ներկա լինել ընտրական հանձնաժողովների նիստերին, իսկ քվեարկության ընթացքում՝ նաև քվեարկության սենյակում:»

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի ընդհանուր թվով 34 ներկայացուցիչներ մասնակցել են վերոհիշյալ դասընթացին և վերոհիշյալ որոշման 22-րդ կետի համաձայն («Ստուգարքի հիման վրա ընտրական հանձնաժողովների նիստերին, իսկ քվեարկության ընթացքում՝ նաև քվեարկության սենյակում ներկա լինելու իրավունք և դիտորդական առաքելություն իրականացնելու վկայական տրվում է այն դիտորդին, որը հավաքել է առնվազն 21 միավոր) ստացել վկայականներ:

ՀՀ ընտրական օրենսգրքի 30 հոդվածի 2-րդ կետի համաձայն «Հավատարմագրվելու կամ հավատարմագրված դիտորդների ցանկում փոփոխություններ (լրացումներ) կատարելու

համար դիմումները կենտրոնական ընտրական հանձնաժողով են ներկայացվում ընտրությունները նշանակելու օրվանից հետո, բայց քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 10 օր առաջ:» Նույն հոդվածի 7-րդ կետով սահմանվում է, որ դիտորդների հավատարմագրման կարգը, դիտորդների հավատարմագրման համար անհրաժեշտ փաստաթղթերի և տեղեկությունների ցանկը, դիտորդների վկայականների ձևերը և դրանց լրացման կարգը սահմանում է կենտրոնական ընտրական հանձնաժողովը:
«Դիտորդների հավատարմագրման, դիտորդների հավատարմագրման համար անհրաժեշտ փաստաթղթերի եվ տեղեկությունների ցանկի, դիտորդների վկայականների լրացման» ՀՀ ԿԸՀ 2011 թվականի հուլիսի 29-ին ընդունված թիվ N 37-Ն որոշմամբ. «5. Տեղական դիտորդն ընտրական հանձնաժողովի նիստերին, իսկ քվեարկության ընթացքում՝ նաև տեղամասային կենտրոնում (քվեարկության սենյակում), կարող է ներկա լինել, եթե դիտորդի հավատարմագրման վկայականից բացի ունի ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման վկայական կամ ստուգարքի արդյունքով ստացած դիտորդական առաքելություն իրականացնելու վկայական:»
Այսինքն ստացվում է, որ չնայած այն հանգամանքին, որ ՀՀ ԿԸՀ 2011 թվականի հուլիսի 29-ին ընդունված թիվ N 36-Ն որոշման համաձայն դիտորդը ստուգարքի հաջող հանձնելու արդյունքում ստանում է վկայական, որը նրան թույլ է տալիս դիտարկել ընտրությունների գործընթացը և մասնավորապես ներկա լինել ընտրական հանձնաժողովների նիստերին, իսկ քվեարկության ընթացքում՝ նաև քվեարկության սենյակում, այնուամենայնիվ ՀՀ ԿԸՀ 2011 թվականի հուլիսի 29-ին ընդունված թիվ N 37-Ն որոշման համաձայն այդ նույն դիտորդը, ով արդեն իսկ ունի ԿԸՀ կողմից տրամադրված փաստաթուղթ՝ իրավունք վերապահող իրականացնել հստակ գործառույթներ, կրկին պետք է դիմի ԿԸՀ ստանալու համար ևս մեկ վկայական թույլատրող իրականացնել դիտորդական առաքելություն (չնայած այն բանին, որ տվյալ անձն արդեն իսկ ունի այդպիսի փաստաթուղթ), վերապահումով, որ այդ վկայականի ունեցող անձը կարող է ներկա լինել ընտրական հանձնաժողովների նիստերին, իսկ քվեարկության ընթացքում՝ նաև քվեարկության սենյակում միայն թիվ N 36-Ն որոշմամբ նախատեսված ստուգարքի արդյունքում ստացված վկայականի առկայության պայմաններում:
Հետևաբար, ակնհայտ է անհարկի վարչարարություն, որը ժամանակատար է և հիմնազուրկ:

<u>Իրադրության բարելավմանն ուղղված առաջարկություն</u>
Սահմանել, որ ՀՀ ԿԸՀ 2011 թվականի հուլիսի 29-ին ընդունված թիվ N 37-Ն որոշումը վերաբերելի է միայն այն դիտորդներին, ովքեր ՀՀ ԿԸՀ 2011 թվականի հուլիսի 29-ին ընդունված թիվ N 36-Ն որոշմամբ սահմանված կարգով արդեն իսկ չեն ստացել վկայական՝ առ այն, որ դիտորդը կարող է ներկա լինել ընտրական հանձնաժողովների նիստերին, իսկ քվեարկության ընթացքում՝ նաև քվեարկության սենյակում:

5. <u>Իրադրության նկարագրություն</u>

Խիստ մտահոգիչ է այն հազամանքը, որ որոշ դիտորդներ ակնհայտ կողմակալ վերաբերմունք ունեին այս կամ այն թեկնածուի հանդեպ: Նույնիսկ գրանցվել են դեպքեր, երբ որոշ դիտորդների համար ընդմիջում էր պատրաստվում որոշ թեկնածուների նախընտրական շտաբներում: Այսպիսի դիտորդների կողմից տրամադրված տեղեկությունները որպես կանոն լինում են միակողմանի և ոչ միշտ իրականությանը համապատասխանող:

- **Ոստիկանություն – հանձնաժողով հարաբերությունների հստակեցման հետ**

6. <u>Իրադրության նկարագրություն</u>

Թիվ 25/06 ընտրատեղամասում ժամը 18:00-ի ընտրատեղամաս է այցելել ոստիկանության բաժնի պետը, չմտավ քվեարկության սենյակ, սակայն հանձնաժողովի նախագահի հետ ունեցավ առանձնազրույց ոստիկանների գտնվելու սենյակում կամ հարակից միջանցքում:
Ժամը 08:50-ին ընտրատեղամասին ամրակցված ոստիկաններից մեկը դիմեց հանձնաժողովի նախագահին՝ քվեարկած ընտրողների թվի մասին իմանալու հարցով: Ս.Միքայելյանի վստահված անձի կողմից դա գնահատվեց ոչ օրինաչափ պահանջ/ հանձնաժողովը երեք ժամը մեկ քվեարկության մասնակիցների թիվը պետք է հայտնի միայն տարածքային հանձնաժողովին/ և հանձնաժողովի նախագահը, չնայած դժգոհեց, այնուամենայիվ հրապարակային չհայտնեց թիվը: Միևնույն, ժամանակ նա հեռախոսով հայտնեց/ անհայտ անձին/ որ դա թույլ չի տվել Ս.Միքայելյանի վստահված անձը/ մինչդեռ դա օրենքի պահանջն է, ոչ թե վստահված անձի/: Ոստիկանության բաժնի պետը այցելել է մի շարք այլ ընտրատեղամասեր ևս, որոնց մասին ներկայացված է վերևում:
Թիվ 25/06 ընտրատեղամասում նաև գրանցվել է իրավիճակ, երբ հանձնաժողովի բանավոր դիմումին ընտրատեղամասում ներկա ոստիկանին հաստատել կարգ ու կանոն ընտրողների հոսքի կարգավորման գործում, ոստիկանը հայտարարել է, որ հանձնաժողովի նախագահը իր դիմումը շարադրի գրավոր: Այնինչ, ՀՀ Ընտրական օրենսգրքի 5-րդ հոդվածը սահմանում է, որ ՀՀ ոստիկանության կենտրոնական և տարածքային մարմինները, դրանց ծառայություններն ու ստորաբաժանումները պարտավոր են ապահովել ընտրությունների անցկացման բնականոն ընթացքը, ընտրական հանձնաժողովների ու դրանց անդամների անկաշկանդ գործունեությունը: ՀՀ ոստիկանությունը ընտրությունների հետ կապված միջոցառումներում ապահովում է պատշաճ կարգ ու կանոն, հանձնաժողովի նախագահի պահանջով աջակցում հանձնաժողովներին, ապահովում է ընտրական փաստաթղթերի անվտանգ տեղափոխումն ու դրանց պահպանումն ընտրական հանձնաժողովներում:

Իրադրության բարելավմանն ուղղված առաջարկություն

Առավել հստակեցնել ոստիկանություն – հանձնաժողովներ փոխհարաբերությունների ընթացակարգը և շրջանակները:

- **Մեծ թվով անվավեր քվեաթերթիկների առկայության հետ**

7. **Իրադրության նկարագրություն**

Բավականին մեծ թիվ է կազմել անվավեր քվեաթերթիկների թիվը: Այսպես.

Ընտրատեղամասի թիվը	Քվեարկության մասնակիցների թիվը ըստ ստորագրությունների	Անվավեր քվեաթերթիկների թիվը	Տոկոսային հարաբերությունը
Ընդհամենը	**25480**	**893**	**3.5 %**
ՀՐԱԶԴԱՆ			
25/1	1149	27	2.3 %
25/2	938	44	4.7 %
25/3	1031	32	3.1 %
25/4	1014	47	4.6 %
25/5	1140	42	3.7 %
25/6	1033	52	5.0 %
25/7	949	39	4.1 %
25/8	767	39	5.1 %
25/9	796	25	3.1%
25/10	894	29	3.2 %
25/11	636	20	3.1 %
25/12	777	32	4.1 %
25/13	1315	13	1.0 %
25/14	900	11	1.2 %
25/15	1068	50	4.7 %
25/16	1354	45	3.3 %
25/17	1111	51	4.6 %
25/18	980	39	4.0 %
25/19	740	34	4.6 %
25/20	812	24	3.0 %
25/21	1104	48	4.3 %
25/22	868	33	3.8 %
25/23	825	32	3.9 %
25/24	836	19	2.3 %
25/25	1043	42	4.0 %
25/26	1034	22	2.1 %

25/27	366	2	0.5 %
Սարալանջ			
14/1	115	3	2.6 %
Պեմզաշեն			
Ընդհամենը	1573	34	**2.2** %
36/1	880	19	2.2 %
36/2	693	15	2.2 %

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը, որպես իրավապաշտպան կազմակերպություն, քննարկելով իր շահառուների կարիքները սպասվող ընտրական գործընթացներում և կարևորելով ազատ, արդար և թափանցիկ ընտրությունների անցկացմանն ուղղված կատարվող և կատարվելիք բարեփոխումները ներկայացնում ենք հետևյալ առաջարկությունը համապետական և տեղական բոլոր ընտրությունների ժամանակ քվեաթերթիկներում նախատեսել «Բոլորին դեմ եմ» վանդակը:

Առաջարկությունը հիմնված է այն սկզբունքի վրա, որ թեկնածուներից որևէ մեկի օգտին ձայն չտալու պարագայում ընտրողը կարողանա ներկայացնել իր դիրքորոշումը, որը հաշվի կառնվի քվեարկության արդյունքների ամփոփման ժամանակ:

Ընտրությունների դիտարկման մեր փորձը ցույց է տալիս, որ բազմաթիվ են դեպքերը, երբ ընտրողները, ունենալով բոլորին դեմ դիրքորոշումը, հրաժարվում են ընտրություններին մասնակցելուց, որը հանգեցնում է ընտրողների մասնակցության զգալի նվազմանը, կամ ստիպված են քվեաթերթիկը չլրացնել, կամ տարբեր գրառումներով անվավեր դարձնել այն: Ինչի մասին է վկայում վերևում ներկայացված աղյուսակը: Նման դեպքերում տվյալ քվեաթերթիկները համարվում են անվավեր՝ չնայած քվեարկողը հստակ արտահայտել է իր դիրքորոշումը: Այսպիսով ընտրողների մի մասը, որոնք ունեն «Բոլորին դեմ» դիրքորոշումը մասնակցում են ընտրությանը, սակայն նրանց քվերները համարվում են անվավեր, որը ըստ էության նրանց ընտրական իրավունքի խախտում է: